

Շ. . . .

Արտիստ էր: Ու ոչ միայն լիաբուռ ծափեր կորզելիս: Արտիստ էր ամենասովորական, առօրյա իրադրություններում անգամ՝ կնոջական փնտրված սեթևեթանքով, զարմանալի կոկիկ, հարդարված, տեսանելի շքեղությամբ:

Այդպես էլ խոսում էր. ծորո՛ւն, հարուստ, շքե՛ղ հայերենով, բառերի յուրատիպ ընտրությամբ, դիպուկ բնութագրումներով, անհրաժեշտ դադարներով, քաղաքի հանդեպ ունեցած կրքոտ սիրով: Ճարտասա՛ն էր՝ բառի բոլոր իմաստներով:

Ո. . . .

Բա՛րձր, վարակիչ ծիծաղ ուներ, որ կախվում էր օդում ու շարունակում գրնգալ՝ հասմիկկիրակոսյանական հերթական շեղը-պատումից հետո: Սուր համեմատություններով ու կոմիկական մեծագույն վարպետությամբ, դիպուկ բնութագրումներով կարծես նկարում էր այն միջավայրն ու մարդկանց, ում կամ ինչի մասին խոսում էր, պատմում: Նրա հետ հնարավոր էր ամեն բան ու անհնար միայն մեկը՝ ձանձրանալ:

Թ. . . .

Մերը, որպես կանոն, իր չափումներն ունի: Բայց նա այստեղ էլ կարծատիպ կոտրող էր. Գյումրու նկատմամբ նրա սերն անչափելի էր, նա Գյումրու հավերժ սիրահարն էր՝ նվիրյալի ու նվիրումի չպարագծվող մասշտաբներով:

Ասում էր՝ սոսնձված է այս հողին և իր միտք ու ոգով՝ քաղաքի մշակույթին: Այդպես էլ հեռացավ՝ գյումրեցիների խոնարհված հայացքների ու ծափերի ներքո, կորստի զգացում փոխանցելով նույնիսկ չճանաչողներին և օդում թողնելով իր ձայնը: Հիմա մենք պարտավոր ենք միասին՝ տասնյակներով՝ շարունակել այս ՄԵԿ ՄԱՐԴՈՒԳՈՐԸ՝ թեկուզ միայն ի հանգստություն այն անհանգիստ հոգու, որ փոթորկել գիտեր ամեն ինչ ու ամեն ներաշխարհ:

Ուրեմն. . .

Իր գծած ճանապարհով անցնելու համար համարձակություն է պետք, իմ առջև դրված նշաձողը շատ բարձր է, պատասխանատվությունը՝ հազարապատիկ մեծ: Ես իրեն խոստացել եմ, որ տանուլ չեմ տա ու որ մեր բոլոր չկայացած երկխոսություններում հնչած խոստումները՝ ի սեր քաղաքի ու մշակույթի, կվերածեմ գործի. ես գիտեմ, որ պարտավոր եմ, ինքը գիտեր, որ կարող եմ. . .

Լիլիթ Թովմասյան

*Գյումրու քաղաքապետարանի
մշակույթի և երիտասարդության
հարցերի բաժնի պետ*